# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1229 - Ա

ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆԻՆ ԵՎ ՎԱՐՍԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ
ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ
---------------------------------------------------------------------------------

Հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասը՝

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանին և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության բուսաբուծության վարչության պետի պաշտոնակատար Վարսիկ Մարտիրոսյանին 2022 թվականի հոկտեմբերի 26-28-ը գործուղել Շվեյցարիայի Համադաշնություն (Ժնև)՝ Բույսերի նոր սորտերի պաշտպանության միջազգային միության նստաշրջաններին՝ «Բույսերի սորտերի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի քննարկմանը մասնակցելու նպատակով:

2. Արման Խոջոյանի և Վարսիկ Մարտիրոսյանի՝ Շվեյցարիայի Համադաշնություն գործուղման ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ ապահովել գործողումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում Շվեյցարիայի Համադաշնություն գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն ներկայացնելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ　　　　Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

18.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ